

## **ԵԱՀԿ երևանյան գրասենյակը համակազմակերպում է տնտեսական ճգնաժամի վերաբերյալ բարձրաստիճան ֆորումը Հայաստանում**

ԵՐԵՎԱՆ, 25 մայիսի 2009 թ. – Հայաստանի բարձրաստիճան ռազմավարություն մշակողները, միջազգային կառույցների, հիմնական ֆինանսական հաստատությունների, գիտահետազոտական հիմնարկների ներկայացուցիչները հավաքվեցին այսօր «Փոլիսի ֆորում ին Արմենիա» /Policy Forum in Armenia/ կազմակերպության կողմից ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և այլ կառույցների համագործակցությամբ կազմակերպված ֆորումի շրջանակներում՝ քննարկելու, թե ինչպես կարող է Հայաստանը դիմակայել համաշխարհային ֆինանսական ճգնաժամին:

Օրակարգում տնտեսական ոլորտում Հայաստանի ռազմավարություններն էին և ճգնաժամի հետևանքների կապակցությամբ նախաձեռնած միջոցառումները:

«Հավաքելով լավագույն փորձագետներին հիմնական տնտեսական և ֆինանսական հաստատություններից՝ քննարկելու ՀՀ կառավարության, միջազգային հանրության և բարձրաստիճան մասնագետների համատեղ ջանքերը կօգնի Հայաստանին գտնելու արդյունավետ ճանապարհներ հաղթահարելու համաշխարհային տնտեսական անկումը», սասց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար դեսպան Սերգեյ Կապինոսը:

Դավիթ Գրիգորյանը, որը «Փոլիսի ֆորում ին Արմենիա» հիմնադիրներից մեկն է, հավելեց. «Այս միջոցառումը գլխավոր ռազմավարություն մշակողներին հնարավորություն տվեց ծավալելու քննարկումներ, որոնք կխթանեն ճգնաժամի մարտահրավերների վերաբերյալ լայնատարած մոտեցումները Հայաստանի համար»:

Հայաստանի նախկին հինգ վարչապետները մասնակցեցին վերջին նիստին «Հայաստան. Դիմակայելով համընդհանուր աղետին» թեմայով, որը հատկանշական էր այլընտրանքային ռազմավարությունների վերաբերյալ լայն քննարկմամբ: Մասնակիցների թվում էին նաև Հայաստանի, Ռուսաստանի և Թուրքիայի ներկա և նախկին բարձրաստիճան ներկայացուցիչներ կենտրոնական բանկերից, նախկին տնտեսության և ֆինանսների նախարարներ, պատգամավորներ և հետազոտողներ:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը կազմակերպել է միջոցառումների շարք, որի թիրախում է քննարկել համաշխարհային ճգնաժամի հետևանքները Հայաստանի վրա: Այն իրականացվում է ճգնաժամին հակազդելու Հայաստանի միջոցառումների ծրագրին աջակցելու շրջանակներում: